## ՖՐԵՆՍԻՍ ՍՔՈԹ ՖԻՑՋԵՐԱԼԴ «ԳԻՇԵՐՆ ԱՆՈՒՇ Է»

Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդը ծնվել է 1896 թ.-ին, Մինեսոտա նահանգի կենտրոն հանդիսացող Սեյնթփոլ քաղաքում: Նա 1911 թ.-ին իր հորաքրոջ օժանդակությամբ և հովանավորությամբ Նյու Ջերսիի կաթոլիկների դպրոց է ընդունվում: Երկու տարի անց ընդունվում է Փրինսթոնի համալսարան: Այստեղ մասնակցում է գրական և դրամատիկ ծրագրերի: Սակայն երեք տարի անց լքում է համալսարանը և մեկնում զինվորական ծառայության: Ուղարկվում է Մոնտգոմերի՝ Ալաբամա նահանգի կենտրոն և այնտեղ է, որ Ֆիցջերալդը հանդիպում է Զոլդա Սայրեին: Զոլդան ամուսնության առաջարկությունը սկզբում մերժում է, սակայն երբ տպագրվում է «This Side of Paradise»( «Դրախտի այս կողմում») վեպը, որը քանչորս տարեկան Ֆիցջերալդին փառք է բերում, համաձայնում է և ամուսնանում նրա հետ: Սակայն 1920 թ.-ին նրանց կյանքում բարդություններ են առաջ գալիս: 1921 թ.-ին տպագրվում են «The Beautiful and Damned» («Գեղեցիկները և անիծվածները») վեպը և մի քանի այլ փոքր պատմություններ: Սակայն դստեր ծնունդն ու կյանքի դժվարությունները ստիպում են մեկնել Ֆրանսիա: 1925 թ.-ին տպագրվում են Ֆիցջերալդի ամենաճանաչված վեպերից մեկը՝ «The Great Gatsby» (Մեծն Գեթսբին) վեպը և փոքր պատմությունների ժողովածուն: Ֆիցջերալդը 1920-ականներին իր ֆինանսական վիճակը կարգավորելու համար մի շարք փոքր պատմություններ է գրում: Ի վերջո, կյանքի դժվարություններին չդիմանալով, Սքոթն սկսում է օգտագործել ալկոհոլ՝ մեծ քանակությամբ, Զոլդան էլ կորցնում է հոգեկան հավասարակշռությունը և 1930-1935 թթ., այսինքն՝ մինչև կյանքի վերջ անց է կացնում հիվանդանոցում: 1931 թ.-ին Ֆիթջերալդը մշտապես մեկնում է Միացյալ Նահանգներ և հաստատվում Մերիլենդ նահանգում, որտեղ պառկած էր իր կինը: Այս ժամանակահատվածում՝ 1934 թ.-ին, տպագրվում է Ֆիցջերալդի «Tender Is the Night» (Գիշերն անուշ է) վեպը: Վեպ, որը տպագրվում է «Մեծն Գեթսբին» վեպից չորս տարի անց և որը, ըստ Ֆիցջերալդի, ամենալավ ընկերոջ՝ Էռնեստ Հեմինգուեի կարծիքով վերջինիս լավագույն ստեղծագործությունն է: Նա նշում է, որ այս գիրքը կարելի է համարել Ֆիցջերալդի ինքնակենսագրականը, որտեղ նկարագրված է նրա ծանր կյանքը և նրա հարաբերությունները Զոլդայի հետ: Իսկապես, Ֆիցջերալդն իր անհատական կյանքը և Զոլդայի հետ հարաբերությունները ներկայացնում է Ջերալդի և Սարամորֆիի օրինակով: Իրականում՝ Ֆիցջերալդն այս վեպը գրել է՝ թաքցնելու համար իր հոգեկան անհանգստությունները և արվեստի ու անհատականության անկումը: Պատմվածքը Դիք Դայվեր անունով մի

երիտասարդ ամերիկացի հոգեբույժի անկման մասին է, որը Նիկոլի՝ իր երիտասարդ և հարուստ հիվանդներից մեկի հետ ամուսնության պատճառով կորցնում է իր ֆիզիկական առողջությունը: Ֆիցջերալդն այս վեպում իր ներքին աշխարհն է բացում ընթերցողի առջև: Վեպի հերոսների անկումն իր տխուր կյանքի արտացոլումն է: Ինչպես նշվեց, Զոլդան Շվեցարիայի հիվանդանոցներից մեկում պառկած էր, ֆինանսական վիճակն անհույս էր, և նրա առողջությունը խարխլվել էր: Այս վեպում, որը մտնում է քսաներորդ դարի առաջին եռյակի մեջ Սքոթ Ֆիցջերալդն իր ժամանակի դասական գրողներից մի քանի քայլ առաջ է գնացել և իր հերոսուհուն նկարագրելիս ներկայացրել է ոչ միայն որպես կին և մայր, այլ հասարակության զորեղ անդամ: Նա այս վեպում նաև ներկայացնում է պատերազմը, ազնվական կյանքը և Հոլիվուդի դերասաններին, ինչպես նաև ամերիկացի հարուստների ներքին անհանգստությունը, ովքեր առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո իրենց շահի և զվարճանալու համար եկել էին Եվրոպա: Ֆիցջերալդն սկզբում ցանկանում էր վեպի անունը դնել « Բժիշկ Դայվերի արձակուրդը», սակայն հետո անունը վերցրեց Ջոն Գեյթսի « Ձոն սոխակին» գրքից: Գիշերն անուշ է» կամ իր՝ Ֆիցջերալդի մեկնությամբ «Կյանքի դժվարությունների քաղվածք» վեպը սկսվում է Ֆրանսիայի Ռիվերի ափին Դիք Դայվերի նկարագրությամբ: Նրա կինը՝ Նիկոլը, ով սկզբում Դայվերի հիվանդներից է եղել, այնուհետև սիրահարվել և ի վերջո, քրոջ առաջարկությամբ, ամուսանցել վերջինիս հետ, նույնպես ամուսնու հետ եկել է այստեղ՝ արձակուրդն անցկացնելու: Նրանք ընկերանում են Ամերիկայից եկած մյուս խմբերի հետ և հենց այստեղ է, որ Դիքը հանդիպում և սիրահարվում է ամերիկացի դերասանուհի Ռոզմարիին: Պատմվածքը շարունակվում է և Դայվերն աստիճանաբար կորցնում է իր երբեմնի հանգստությունը և ուժը, միաժամանակ Նիքոլն աստիճանաբար ավելի է կազդուրվում: Մյուս կողմից վեպի սկզբում Դիքը ինքնուրույն և հոգևոր առումով ուժեղ անձնավորություն էր, ինչպես պատմվածքի սկզբում ծովի հանգիստ ալիքները, և Նիկոլը, ով հիվանդ էր, աստիճանաբար Դիքի հետ տեղերով փոխվում են: Վեպը վերջանում է Դիքի համար շատ անիմաստ, քանի որ Նիկոլն ամուսնանում է մի այլ անձնավորության հետ: Ֆիցջերալդը «Գիշերն անուշ է» կառուցվածքի համար չի օգտվել ներքին նկարագրությունից: Վեպի առաջին հատվածի սկիզբը պատմվում է երիտասարդ դերասանուհի Ռոզմարի Հոյթի անունից: Սակայն հետագայում մեծ մասամբ գերիշխող է դառնում Դայվերի տեսանկյունը, երբեմն էլ տեսանկյունը փոխվում է և հենց այս պատճառով կառուցվածքն ամուր և կենտրոնացված չէ: Հետագայում Ֆիցջերալդն այն եզրակացության եկավ, որ եթե պատմվածքը չսկսեր Ռոզմարի անունից, ապա ավելի հաջողված կլիներ: Հետագայում այս վեպը ենթարկվեց քննադատության. նշում էին, որ

բովանդակությունը և կառուցվածքը չեն համապատասխանում վեպի չափանիշներին: Ուստի Ֆիցջերալդը փոփոխեց կառուցվածքը՝ տալով նրան վեպի կառուցվածք: Այնուամենայնիվ վեպը երկու տեսքով էլ տպագրվեց: Ստեղծագործությունում հեղինակը բացահայտում է հերոսների անհատականությունը: «Գիշերն անուշ է» մի իդեալիստի վեպ է, որը տեղի է տալիս հասարակության վերին շերտի բուրժուատիկ գաղափարներին և փոխանակ բարձրանալու իդեալիզմի բարձունքը, իր ստեղծագործողի նման իրեն տալիս է ալկոհոլի: Այնուհետև վեպն իր գագաթնակետին է հասնում, որտեղ նկարագրվում է հերոսի անհատականության անկումը տրագիկ ուժերի կողմից, ինչպիսիք են ներքին անհանգստությունները: Ներքին անհանգստություններ այն բանի շուրջ, որ Դիքը չի համապատասխանում իրեն շրջապատող հասարակության պատկերացումներին, որի արդյունքում էլ անհատականության անկում է ունենում: Դիքն ի սկզբանե տեղյակ է Նիկոլի հարստության մասին և ամեն կերպ ցանկանում է պահպանել իր ֆինանսական ինքնուրույնությունը, իսկ մյուս կողմից հաճույք է ստանում կյանքի փայլից, որ կնոջ հարստությունից է գալիս: Այն պարագայում, որ հերոսի անհատականության անկումը «Գիշերն անուշ է» վեպի հիմքն է կազմում: Ֆիցջերալդն իր վեպում անհատականությունը փոխում է նյութականի հետ: Այս վեպն ուսումնասիրում է նաև 1915-1930-ականներին Եվրոպայում հաստատված ամերիկացիների ավանդույթներն ու սովորույթները: Սա մի հասարակ ռեալիստական պատմություն չէ, այլ մի անհատի կյանքի մեկնաբանությամբ ավելի ընդարձակ ժամանակահատվածի և հասարակության նկարագրություն: Ֆիցջերալդն իր հերթին «Գիշերն անուշ է» վեպը համարում է փիլիսոփայական և հոգեբանական ստեղծագործություն: Եվ իսկապես, զրոն այս վեպում կատարյալ հոգեբանական ուշադրությամբ է նկարագրում մանրամասները: Վեպի վերջում Դիքը հասկանում է, որ երբեք Վերն ընտանիքի համար ինքը բժշկից ավել արժեք չի ունեցել: Ճակատագրի հեգնանքն այն է, որ երբ Դիքն ու Նիկոլն ամուսնալուծվում են, Նիկոլը արդեն կատարելապես ապաքինված է լինում: Դիք Դայվերը Ֆիցջերալդի նման այս աշխարհի ոչ հանգիստ բնակիչներից է: Ֆիցջերալդը Դիք Դայվերի բնավորության մեջ իր անձի երկակիությունից է օգտվել: Արդյունքում Դիքը մի կողմից հաճույք է ստանում Նիկոլի հետ կյանքից, իսկ մյուս կողմից՝ հրաժարվում է դրանից: Դիքը քսաներորդ դարի պատերազմից հետո ամերիկացի խելացի սերնդից է:

Երբ Դայվերի հայրը մահանում է, նա գտնվում է ազդեցության տակ և գտնում, որ այդ պահին ինչ-որ խորհրդանշական կապ կա այն հին ապահով և ազնվական աշխարհի հետ: Նա գերեզմանոցում ինքն իրեն

22նջում է. «Հաջողություն հայրիկ, հաջողություն իմ բոլոր հայրերին»[1]: Դիքը մնում է միայնակ՝ իր կյանքի ոչնչարություններով, իրեն շրջապատող հասարակությամբ, առանց որևէ վայրի, որտեղ կպահպանվեին իր արժեքներն ու վստահությունը: Ֆիցջերալդն այստեղ ցանկանում է ցույց տալ, որ Դիք Դայվերի անկումն անմասն չէ ավելի ընդարձակ պատմական և հասարակական փոփոխությունների հետ: «Գիշերն անուշ է» և այլ ստեղծագործություններ ցույց են տալիս անհատի կյանքի վրա հասարակության ազդեցությունը: Ֆիցջերալդի ժամանակի որոշ գրողներ՝ այդ թվում Դոս Փասոսը նշում էին, որ այն, ինչ բերեց ֆաշիզմի զարգացմանը և Իսպանիայում ներքին պատերազմին, խորթ էր գրողին և իր ժամանակի մասին նրա պատկերացումներին: Սակայն իրականում Ֆիցջերալդի մեծությունն այն է, որ կարողանում էր ներթափանցել մարդու անհատականության մեջ: Նա քաղաքականության և հասարակության հետ ուղիղ կապը, որ առաջարկում էին այլ գրողներ, մերժում էր: Իրականում «Գիշերն անուշ է» հիասքանչ ստեղծագործություն է անհատի անկման մասին:

Ֆիցջերալդն այս վեպում, ցանկանում էր ցույց տալ, թե ինչպես մարդ և կին հարաբերության մեջ կարող են փոխանակել թույլ և ուժեղ մարդու դիրքերը, ինչպես է մեկն ազդում մյուսի ֆիզիկական և հոգևոր առողջության վրա: Շատերի կարծիքով Ֆիցջերալդն այս վեպով ցանկանում էր ցուցադրել իր կյանքը Զելդայի հետ, թե ինչպես, սկզբում լինելով հաջողակ, ակտիվ և կենսուրախ գրող, ժամանակի ընթացքում վերածվեց թույլ և հարբեցող մի մարդու: 20-ականներին Ֆիցջերալդը գրողներից և անգամ Հեմինգուեյից ավելի հաջողակ էր, սակայն 30-ականներին ոչ միայն հետ էր մնում ժամանակակից գրողներից, այլև մեկուսացավ գրականությունից:

Ֆիցջերալդը մինչև կյանքի վերջ չբաժանվեց Զելդայից: Նա այս վեպում իր ներքին աշխարհն է բացում ընթերցողի առջև, և վեպի հերոսների անկումն իր տխուր կյանքի արտացոլումն է:

Գրականություն


1. Աթաշբեյ, Դավոյ , Նոթեր «Գիշերն անուշ է» պատմվածքի մասին, 1389թ.
2. Սադրի, Ամիր, Ֆ. Սքոթ Ֆիցջերալդի կարճ սակայն հարուստ կյանքը, Արիա, հ. 2,18,78
3. Ֆիցջերալդ Սքոթ, «Գիշերն անուշ է» ,թարգմանությունը Աբրամ Փեղրամնիա, 1388թ.
4. Մովահեդին, Մահմուդ, «Գիշերն անուշ է» www.Google.com
5. Հաշեմի Նասեբ. Փեյման, Ֆիցջերալդը կործանված մարդկանց երազների որոնումներում, Գոլեսթան, հ. 20
6. Լեգաևե Թաբրիզի, Սքոթ Ֆիցջերալդը և Ամերիկյան երազները, համար 79
7. Hall, Wiliam F. : «Dialogue and theme in Tender is the night» in modern language notes, 1961


[1] F.Scott Fitzgerald,Tender is the night,p. 224